

Մայիսի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

07/05/11թ. «Շիրակ»-«Միկա» խաղին «Միկա» թիմի ֆուտբոլիստ Հայկ Իշխանյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Միկա» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

10/05/11թ. «Արարատ-2»-«Բանանց-2» խաղին «Բանանց-2» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Սարաֆյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

05/05/11թ. «Ֆուրման-95»-«Արարատ-95» խաղը չկայանալու խաղադաշտը չտրամադրելու պատճառով համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Ֆուրման-95» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Ֆուրման Աբրահամյան» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

08/05/11թ. «Օլիմպիկ»-«Քյավառ» խաղին «Քյավառ» թիմի ֆուտբոլիստ Արտաշ Մկրտչյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Գավառի մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

Տուգանքի վճարումը (40000 դրամ) ուշացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Էրեբունի» սպորտային ակումբին տուգանել ուշացրած գումարի 20% չափով - 8000 դրամ: